

թիւն է անում մի անձ, և գովելի է այդ պարոնի եռանդը, որ մեր աղքատիկ գրականութիւնը աւելի և աւելի ծաղկեցնելու համար, գրամական միջոցներ է գրել վեհափառ Հայրապետի տնօրինութեան ներքոյ, հրատարակելու ժողովրդական ընթերցանելի գրքեր և կամ քարոզներ աշխարհաբար լեզուով, հասարակ դատակարգին մասնելի և արժան լինելու համար:

Առանձնակի շնորհակալութիւն պիտի յայտնել այդ վեհանձն մարզուն, որ գրականութեան մասին այնքան լայն և մեծ գաղափար ունի: Ուրեմն հարկաւոր և պարտաւորեցողիչ է միւս ազգայնոց էլ այդ բարի մարդուց օրինակ անել, և գրքի կամ լրագրի (որքան փայլուն բան, եթէ իրագործուի մեր սրտի փափագածները) ընծաներ բաժանել այս և այն հաստատութիւններին:

Եթէ այգպիսի մէկը լինի՝ խորհուրդ կը տալինք նախ և առաջ թիֆլիսի հասնապին Գրադարանին նուէր տար Բազմալեզու և թիֆլիսում հրատարակուող գեղարուեստական երկու թերթեր Աշխարհ և Տարած:

Տեսնելով այս գրութիւնը հայկական գրադարանների վերաբերմամբ, պիտի իւրաքանչիւր մարդու սրբազան պարտականոքիանը լինի օգնելու դրանց. բայց այդ պարտականութիւնը որքան անգամ աւուել է, հրապարակի վրայ մեծ դեր է խաղացել, օտկայն միշտ մնացել է անտես, անլսելի...

Վերջապէս արթնացէք ո՞վ Հայեր, մի րոպէ գտնէ յետ նայեցէք և տեսէք թէ ձեր շուրջը ի՞նչ է կատարում, որ խնայում էք ձեր «բազում անելորդ» կոպէլիները:

Միշտ առաջ տանողը ո՞վ է, ո՞վ, եթէ ոչ մամուլը, գրականութիւնը \*...

ՀԱՅՐ. ԲԱՐՈՒՐԵԱՆՑ

Թիֆլիս, 5 փետր. 1898.

## ՍՈՒՐԷԱՆԳԱՆ ԲԱԶՄԱԼԵԶՈՒ

ՆՈՐ ՀԱՐՑՄԱՌՆԵՐ

### 1. ՀԱՅ ԳԱՐԺԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՅԱՆԵՆԱՆՆԵՐ ԱՇԽԱՐՀԻՄ

Առ հասարակ ազգային թէ լրագիրք և թէ պարբերական համդէպ, հայ զաղթադաժութեամ վրայօք, զանազան անգամ յօդուածներ և խմբագրականներ հրատարակեցին. սոյն յօդուածագիրք, — ինչպէս ծանօթ է արդէն ընթերցող հասարակութեամ, — ընդհանրապէս զաղթականութեամ տխուր կողմերը շօշափեցիմ կամ լաւ եւս ըսել շեշտեցին. և մասնաւոր թէ ամենայն ճգամը աշխատեցան համոզել որ մեր բնաշխարհի ժողովուրդն իրեն սեփական հայրենիքէն չհեռանայ, և թէ՛ որոնք որ պարագային տխուր բերմամբ զաղթած էին գտար աշխարհներ՝ հրաւէր կարդացին վերստին իրենց բնավայրը դառնալ: — Այդ սոյն առիթէն օգուտ քաղելով՝ Բազմալեզու միջոցով կը փափարէի հետեւեալ հարցումն ընել.

ա. Արդեօք մեր ազգի՞ յարմարելով պարագային և կամ քաղդին բերմամ պէտք է գաղթել օտար աշխարհ թէ ոչ:

բ. Արդեօք միշտ վնասակար եղած է գաղթականութիւնը. և կամ թէ ոչ, ի՞նչ օգուտներ յառաջ բերած է:

Ահաւասիկ հարցում մը, որում կարեւորութիւնը ամօթաւորի է կարծեմ, ուստի չեմ կարծեր որ խմբագրական սապատին արժանանայ:



\* Միւս Թղթակցութեան մէջ կը խօսիմ թիֆլիսում եղած «Արքունական ժողովրդական գրադարանի», գրքերի, ցուցակների մասին, և այլն...